Кстати, о церкви. Автор не обходит острые углы, напоминая о гонениях на Армянскую Церковь и школы в начале XX века. По представлению министра внутренних дел в Комитете министров Российской империи были рассмотрены изменения порядка управления имуществом Армянской Церкви, на котором за секуляризацию высказались 5 министров и против - 12. Однако 12 июня 1903 года Николай II утвердил резолюцию: "Согласен с мнением 5 министров". Как отмечает историк В. Г. Тунян, "...Эчми-

меньшинства и волей самодержца России".

Здесь стоит подчеркнуть еще один нюанс в ранней деятельности последнего российского самодержца. По поводу кровавых событий в Сасуне в 1894 году, когда слово императора могло многое изменить в судьбе западных армян, Николай II написал 3 декабря: "В чужой монастырь со своим уставом не идут" (материал из ЦГА Республики Северная Осетия-Алания).

В августе 1905 года царю пришлось отменить пресловутый указ от 12 июня 1903 года. Это произошло не по доброй императорской воле. Еще цитата: "Казаки и чиновники осаждали армянские церкви как крепости, которые с большим трудом удалось очистить от армян... Каждую пядь церковных земель армяне защищали, проливая кровь. Однако сила все же была не на их стороне, правительственные войска одолели". Читаешь и поражаешься государственной "мудрости" христианского монарха, который, начав с Ходынки, завершил свои дни Ипатьевским домом, попутно угробив миллионы людей разных национальностей.

Среди армян Северного Кавказа был известен не только маслобойщик Аведов. Отсюда и корни армян Тарасовых, давших французского классика Анри Труайя, во Владикавказе родились выдающийся режиссер Евгений Вахтангов, певец Павел Лисициан, из Кизляра - близкий друг и соратник Ленина Исаак Лалаянц, из Ставрополя - библиотечкарь Ленина и Крупской Шушаник Манучарьянц.

Борис Ованесов рассказывает о роли армян в развитии Северного Кавказа до 1917 года. Дальнейший период, включая новейшие времена, - тема отдельных глубоких изысканий, ожидающая своих исследователей.

АЛЕКСАНДР ТОВМАСЯН

## В Майкопе в 2011 году начнут строить Центр армянской культуры

Региональное отделение Союза армян России (САР) нашло спонсоров и меценатов, готовых вложить средства в строительство со следующего года Центра армянской культуры в Майкопе.

"Идея строительства культурного центра в Майкопе возникла давно, но из-за нехватки финансов ее реализация постоянно откладывалась. Надеясь, что при поддержке спонсоров наши задумки будут реализованы", - отметил председатель регионального отделения Союза армян России Парнак Кукулян.

По его словам, проект предусматривает возведение Центра на участке, где сейчас размещен крестильный храм Сурб Арутюн Армянской апостольской церкви в западной части Майкопа. Там должны появиться здания воскресной школы, конференц-зал, подсобные помещения, а сам храмовый комплекс будет достраиваться и расширяться.

Кукулян также уточнил, что в уходящем году региональное отделение САР в Адыгее активизировало свою работу. Так, при майкопской средней школе №9 открылись воскресные курсы по изучению армянского языка, в городе появился ансамбль армянского танца "Наири", а ансамбль "Еразанк" из СДК х. Пролетарского Майкопского района недавно стал призером фестиваля в Сочи, активно гастролирует по населенным пунктам, где компактно живут армяне.

"Укрепились связи с родственными организациями Краснодарского края. Большой объем работы у нас занимает поддержка тех соотечественников, которые прибыли в Адыгею на постоянное жительство, работаем в тесном контакте с Федеральной миграционной службой", - отметил П. Кукулян

## В Крыму создали комиссию по противодействию проявлениям ксенофобии и хотят построить

### «Дом Дружбы»

В Крыму создана комиссия по противодействию проявлениям ксенофобии, своевременному выявлению случаев национальной и религиозной вражды. Об этом Крымскому информационному агентству сообщила член комиссии, региональный представитель Юга Украины и Молдовы ВЖО «Проект Кешер» Алина Верховская.

По ее словам, решение о создании комиссии было принято в ходе «круглого стола» на тему: «Толерантность: Взаимопонимание. Взаимоуважение. Взаимобогащение» в Симферополе 23 декабря.

Алина Верховская рассказала, что целью комиссии является оперативное реагирование на проявления экстремистских выступлений в регионе. При этом в состав комиссии также вошли: председатель Объединения Межнационального Согласия, первый заместитель Постоян-

ного Представителя Президента Украины в АРК Владимир Казарин, заместитель председателя Объединения Межнационального Согласия, член Союза журналистов Рагим Гумбатов, председатель лиги «Майрик» армянских женщин Карине Асланян.

Алина Верховская уточнила, что в ходе мероприятия было принято решение обратиться с открытым письмом к Совету министров АРК и попросить сохранить Республиканский комитет АРК по делам межнациональных отношений и депортированных граждан.

Кроме того, члены комиссии намерены инициировать цикл передач «Крым многонациональный» и предложить исполнительному комитету Симферопольского городского совета создать «Дом Дружбы».

«Крымское информационное агентство»

«Ձայն համշենականի» 2010թ. N3-4-ում տպագրել էինք Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական հ/կ խորհրդի անդամ տիկին Վարդուհի Խաչիկյանի (1935-2009) իր մոր պատիվը՝ 1835թ. Օրդուում ծնված Մինաս Յանուկյանից Աբխազիայի Մաշաբա գյուղում 1960-ական թթ. լսած հեքիաթներից մեկը՝ «Մաշտուն օր էլ տառնա...»: Այս համարում տպագրում ենք տիկին Վարդուհու գրառած մյուս հեքիաթը՝ «Մինասը»: Այն մեր խնդրանքով գիտական ուղղագրության է վերածել և թարգմանել «Համշեն» հ/կ փոխնախագահ, երևանի N 3 դպրոցի տնօրեն, ծնունդով Աբխազիայի Ծեբելդա գյուղից պարոն Սահակ Լևոնյանը, որը «Ձայն համշենականի» հիմնադրման օրվանից մեզ մշտապես աջակցում է Համշենի բարեգործական միության հրատարակելիս, ուստի օգտվելով առիթից նրան ենք հայտնում մեր խորին շնորհակալությունը:

ՍԵՐՊԵՅ ՎԱՐԴՈՒՅԱՆ

# ՄԻՆԱՍԸ



ալի էգոն աստիս տա. «Երգու դուրբոն ընօղ էլյը, օ՞րի չարիկ»:  
 Մաշտուն գեշտա օճխարմը նալ կընա գու, դոնին դուրբոնը գընին, փայ գընին, յեղ կուկոն:  
 Եպեյնը սըրա յօր գօնծնի նա, գընիգը դէսնու գու յօր, ինծիմը փեղը մեծընա գու, քօկնա գու, չաշտիմը գըլի. մաշտուն գասա.  
 - Դօ, Վաշտուն, կիդիստա յես դըղա օնօղ յիմ:  
 Մաշտուն փյո նեղվի գու քեճ էգած դեղըն, նահրա գու բար խաղուշ, մընի ատուշ, չիդո՞ ալ ինձ ընա, չի հավդալ լըսածին, պայսը ծընօվ կօռա գու.  
 - Աստըծուս օնինին մեռնին:  
 Աղ օրվօնըն մաշտուն ըմըն սըրա գեշտա խաճը, ծուկըճը գընա, մուս կօլա գու, թետվծած դուկը կուկա:  
 Կիշերնը նալ գընեճը ցավերը պըռնին գու, մաշտուն գեշտա, դըղա պալուլօղ մօն կօռա գու, հընու հընճուկ լուս ծընվին գու էրգու մօն. մեզը՞ խաս-բետկը, արօխճ, միգալը՞ գայիֆ, գավա-լիգ, ծընվընուն վար ըռօնծ օտկ: Արօխճ դըղին օնունը տընին գու Առտին, միգալինը՞ Մինաս:  
 Վաշտունն ու Լուսխատունը հըմ ուրախ էյնը, հըմ ալ՝ դըխուր: Առտինը մեծընար գու օրաօր, թեզըն նահրիծ խօրատուշ, մօն էգուշ, պըզուշ, դըղօծը հեղը խաղուշ, Մինասը՞ գայիֆ-գայիֆ, լավ չէր ուղի, ուշ խօրատուշ նահրիծ, քալիլ չէրգարի: Վաշտունն ու Լուսխատունը օրափրի-գուն հազ գընեյնը Մինասին, գօնտեյնը մօն պերեյնը գու: Մինասն ալ շաղ խելածի էր, ինձ ասեյնը, լըսեր գու, մըտկին բախեր գու:  
 Առտինը դէսներ գու յօր, ախպօրը շաղ հազ գընին, ալլայը լավ պօները անու գուղըծընին, մօն պերին գու, խաճը դօնին գու, նախանծվի գու. ուր վըրըն աշօղ չիկար: Ինկն ալ ուրիմը պայսը բախեր գու. օյլայա՞ ինճկան ալ աղու աշէկ նա, չիգարի քալիլ, խաղալ:  
 Առտինը օրըն հօյն ու մօրը գասա տա.  
 - Օ՞րի բախած ունէկ Մինասին, նա քալա գու, նա խաղա գու, նա յալ գայնա պօնիլ: Դարէկ հէկիմատին դըվէկ, հուն ալ գինա տուկա, աշին տուկա. ինճկան մէնկ աշիծակ, հէրիկ ա:  
 Զօնիմը սըրա գօնծնի, ալի գասա, ամա Վաշտունն ու Լուսխատունը չէյնը ուզիլ լըսուշ: Ըմըն սըրա գասեյնը.  
 - Մինասը մի դօնը շընլուղն ա, մէնկ անու շաղ հազ գընին, ան միր հեղը աբաօղ ա անկան սըրա, քօնի մէնկ գօնկ:  
 Աղ օրվօնըն դօնը նեղը նահրա գու խօսկ-խօրատունը Առտինին հընու հօյն ու մօրը մեճ:  
 Առտինը ըմըն սըրա Մինասին քըկըստա գու, հընտա՞ քու հու-մար ինճի հազ ընիլ չին: Մինասը

Վախտին գըլլին մաշտուն նու գընիգըն. մաշտուն օնունը Վաշտուն էր, գընեճը՝ Լուսխատուն: Անկան իրար հազ գընեյնը հընոր, մեգիեղ գեշտայնը պօնուշ, մեգիեղ ալ կուկայնը:  
 Աղսօյ աբաօն էպեյնը նա, օրըն նալ մաշտուն գընեճը գասա տա.  
 - Բա գընիգ, մէնկ առտուկ գօնծ-գօնծ գեխտայնօնկ, մեգի ուրախծընօղը, էխտայնուտին-նուս թասնը ճուղ դըվօղ չիկն օն-նալ, ինճիմը միտկ ընիկն:  
 Օրըն գընիգը մաշտուն գասա տա.  
 - Հայրի էշտօնկ խաճը, ծուկըն ընինկ աստըծուն, բալկի մեգի յալ դըղընը դա:  
 Մաշտուն լըսա գու գընեճը. էր-գուսով նահրին գու խաճը էշտուշ, ծուկըն ընուշ, խընտըրվուշ աստըծնա յօր, դըղընը պաշխա ուրիմծ:  
 Գօնծնի քօնիմը օնիս նա, գընիգը նեյգին դէսնու գու՝ ինճպէս էրգու հրէշտագնի կուկօն նըստին գու մաշտ ու գընեճ ուտերուն, լիգու գառնուն, գասին տա. «Կընածօկ, էրգու օճխար գըղեծէկ, դուրբոն արէկ հընօր, աստված ալ ծիր ուզածը ընա»:  
 Կիշերվօն նեյգըն գընիգը գայտի գու, մաշտուն դիռտմա գու.  
 - Դօ, գայտա, լսա տա, նեյգիս ինձ դէսած ունին:  
 - Բա, ի՞նճ դէսար, գընիգ, բաղմա:  
 Գընիգը ալլայը բաղմա գու մաշտուն:  
 Մաշտուն փյո նեղվի գու, ալ գընեճը ասիլ չի, լուսը դահա չըպածվելու՝ գեշտա կըղնու գու չօքօնուն, կընա գու մեգ օճխարմը՝ դօծ, կուկա դուկը, գասա.  
 - Գընիգ, վիր յէլ, օճխարը պերած ունին, դօնինկ խաճը, դուրբօն ընինկ:  
 Դօնին գու խաճը, ծուկընը գընին, մուս կօլին գու, աստեղ ալ դուրբօնը փայ գընին ու կուկօն դուկը:  
 Գօնծնի իրէկ օր, գընիգը ալի դէսնու գու աղ ներագը. աս սըրին հրէշտագնի գասին տա. «Օ՞րի մեճը դուրբօն արիկ, կընծէկ, մեճը նալ արէկ»:  
 Գընիգը մաշտուն գայտեճընա գու.  
 - Դօ,- գասա,- հրէշտագնին

խելածի էր, ինճիգ ասիլ, ջուղաբ դալ չէր: Գասեր.  
 - Մայս, հայս քեզի յալ շաղ հազ գընին, ամա քօնիյօր յես քալիլ չիճգարի, ինճի մէխընօն գու: Վաշտունն ու Լուսխատունը կարար գընին էշտուշ խաճը, ամա էշտուշ-էգուշը էրգու օր քաշէր գու. շաղ գօր էր:  
 էշտալնին Առտինին թամբաի գընին օր, դընըն տուս էլլա հեճ, ախպօրը աշա՞ հընճուկ ուրիմծ էգուշը:  
 Մայն ու հարը գեշտուն նա, Առտինը Մինասին գասա.  
 - Հայրի քեզի իշուն վըրըն նըստըծընին, քիճմը մօն պերին, իրիգընծու կուկօնկ:  
 Մինասը ըրագի գըլլի:  
 Առտինը Մինասին տընա գու իշուն վըրըն, դօնի գու մօն պերուշ: Գեշտուն-գեշտուն շաղ տա քիճ, Մինասը Առտինին գասա տա.  
 - Աս շաղ հեղծակ դընըն, յեղ էշտունկ:  
 Ան ալ գասա տա.  
 - Շաղ չի օնծնիլ, դօնը գըլլինկ:  
 Քիճմընալ օր գեշտուն նա, դէսնուն գու՝ հասած ինճըղած-կինը քօվը: Մեճընալ ուրիմծ մօղ-գընա գու էխտայր մաշտունը: Խնտըրվի գու յօր, էշը ուրիմը դօն. ճըվալըն ալուրը դօնի դուկը, էշը յեղ պերա գու, դեղը ալուր գուղա:  
 Առտինը Մինասին գընճըծը-նա իշուն վըրայնը, նըստըծընա գու խօղուն վըրըն, էշը գուղա աղ մաշտուն:  
 Մաշտուն ուր ալուրը պառծընա գու իշուն, գեշտա ուղ դուկը:  
 Առտինը Մինասին գասա տա. «Աշիմ՞ իսա պօլէյս ինճ գա - չիկա»: Գեշտա. ան էշտուշն էր, գեշտա յու չի կալ:  
 Մինասը բեղ գընա, բեղ, Առտինը չի կալ, էշը դօնօղ մաշտուն ալ չի կալ:  
 Նահրըվի գու վըրայիգը: Մինասը գօրօվ - մօրօվ սըղվալըն մըղնու գու չօռտին դագը, հընօր թատկի հեճ: Յէպօր մըտնի գու, ճըղածըն փագվի գու, ալ մաշտ չի մընալ, վախա գու. կուկօն կալէրը, գուղին ուրիմը: Աղսօյ միտկ ընէլըն՝ աճվին փագվին գու, քուն գըլլի:  
 Կիշերվօն գեպին մեճընալ լըսա գու էրգու մաշտուն ծըն: Խօրատուլըն կուկօն, գաշին՝ ճըղած-քը փագված ա, վըրըն ալ փագը տըրված, գօրաճի փագը, մըղնուն գու նե: Լաֆ-մաֆ ընէլնին ընգեղը ընգեղեճը գասա տա.  
 - Վո՞ւմ բիղու յա յօր, յես աբա՞ն, գընիգըն էրգու դըղօծմէրօվ դօնը մեջարիծօն, յես ալ խսօյ մօն կուկօն սալախօնի բե: Միգալ ընգեյն ալ գասա տա.  
 - Տուն միտկ ընուշի դեղ չու-նիս:  
 - Զա, - գասա, - յես գընիգ - դավշաղ թողած ունին օր, պօնիմ, փարա առնուն, ամա ծեղվիս բարաբ դուկը գեշտուն:  
 Ընգեղը գասա տա.  
 - Դօ, տուն միտկ ընիլ մի, դուկն օյ լուսալ նա, իմ օնըծած հարըստուտինս դարած բախած ունին մաղարին մօղը՝ քարին դագը, ինճի յալ հէրիկ ա, քեզի յալ:  
 Ասսօյ խօրատուլըն (նաճարած, քիտ-քիտ ըղած էյնը) աճվին փագվին գու, քուն գըլլին: Մեճընալ ֆուխարա ընգեղը միտկը գընա յօր, ինճիմը ընա՞ ալլայը օնընծածը ուրիմը մընա: Վիր էլ-էլը ընգեղեճը կըլօրա գու ծեղը, ամա կըլօրեղ ուղ դագի դախտագն ալ գըլըրվի ընգեղեճը հեղը, ինկն ալ էղվօնծ կըլի. էր-գուկն ալ խըխտին գու:

Մինասը աս ալլայը լըսա գու, վախտուշըն ալ քունը դօնիլ չի:  
 Ավընծու ճըղածկին դէրը կուկա, դէսնու գու՝ տուրը պած ա: Մըղնու գու նե. դախտագն ալ չիկա: Քընտին դագ քըֆրա գու, ամա ալ ֆայրա չունի:  
 Քիճմըն յետը կուկա էշը դօնօղ մաշտուն իշուն հեղ, Մինասը տուս էլլա չօռտին դագըն, մաշտուն կայծընա գու.  
 - Վօ՞յղէս ա ախպայր:  
 Գասա.  
 - Հիդիմ, ինճի թողալ հօզ, կընած, ամա ներ կընած, չիդիմ:  
 Եպեյնը բեղ գընին, դէսնուն գու՝ ուվէկ կալ չի նա, մաշտուն գասա.  
 - Դօ, մօն, հայրի էշտունկ դուկն. ուվէկ չիկա, յես մըննագ իմ. բասապալու օրըն չա օրըն կուկօն, քեզի կըղնուն գու:  
 Մաշտուն Մինասին տընա գու իշուն վըրըն, դօնի գու դուկը:  
 Վաշտունն ու Լուսխատունը յեպօր յեղ կուկօն, դէսնուն գու՝ Մինասը չիկա, վայրըլին գու, պօնծին գու: Մեճը նաա գեշտուն, մեճը՝ նըն, կըլնին սար ու ծեր, մօն կուկօն. վուն հայծընին գու, գա-սին՝ չիդիմ. չիճգարի կըղնուլ, յեղ կուկօն:  
 Աղ օրվօնըն մաշտ ու գընիգ հօնկչիլ չին, քուն չունին. աճվը-նուն թապօղ այրըստունկնին ալ գըղեղի չին:  
 Մինասը մաշտուն նահրա գու հազ ընուշ. գասա «հայրի»: Աղ մաշտուն շաղ պօնուգ էր. ալվըն-ծու գեշտար այրը, իրիգընծու կուկար: Մինասն ալ սըղվալօվ դուկը գիտկեր, գըրագը կօլեր գու, հաճ գեղեղ: Մաշտուն օյ դուկը մըղնի գու, աղ դէսներ գու:  
 Օրըն նալ հարը դախտկին դագը թակալ տընա գու, հընօր Մինասին հուսար դօլայ ըլլի ժաճուլ:  
 Մինասը յեպօր քիճմը նալ մե-ծընա գու նա, հարը դէսնու գու յօր շաղ խելածի յա, դօնի գու մակտաբ: Դըղըն աճիլ ալ շաղ լավ սօրվի գու. մեգ դարուն բաշ գընա էրգու տասարան: Հարը դէսնու գու դըղին շընօրկը, խել-կը, միտկը գընա՞ ինճպէս ընա յօր, դըղըն ալի սօրվի, ամա փա-րա չունէր:  
 Իրիգունըն հարը գասա.  
 - Սօնճըս, արի իսա լագըր ծախիկն, քեզի սօրվուշի դօն:  
 - Հայրի,- գասա Մինասը, - ին-ծի գա՞ննաս դօնիլ մաղարըն:  
 - Օ՞րի, - գասա հարը:  
 - Էշտունկ, կօնկ նա, լագըր ծախիկն կու:  
 - Հալբատ դօնին գու, մօն-ճըս,- գասա հայն ու էկսի օրը գեշտուն:  
 Օխտը օր ասէլը հասնին գու մաղարա. հօնկչին գու:  
 - Հայրի, կընա, էրգու էրգըն փաղ կիր, պիր հուգա,- գասա դը-ղըն:  
 Հարը պերա գու: Նահրին գու մաղարին յօնը տըրված քարը ժաճուլ:  
 Ժաճել- ժաճելը քարը քիճմը նըն ժաճի գու: Դէսնուն գու՝ դագը թաղված ա սըղնուգըն: Դած գընին օր՝ ինճ. լիկը օսկի փարա: Մինասը գասա.  
 - Ինճկան գայնաս դօնիլ, առ, մընծածին վըրըն ծածգիկն ու էշտունկ:  
 Զօնիմը օր յետը հարը դըղին գառնու գեշտա, շաղ շահայնի մօն կուկա, հընօյ դըղին օղվին շընին: Սօն կալ-կալը կըղնու գու մեգ հէկիմը, շաղ մեճ փարա գու-դա, հնօր լավ շընա:  
 Օմիսըն չօնծած՝ դըղըն գօն-ծած-գօնծած քալէլըն մօն կուկա: Հարը դըղուն գառնու կուկա մեճ շահարմը, գառնու դունըն՝ ագը-

րօվ, բախծօվ, յօնիկը ալլայը վառտ ու ծաղիգ. բախծին նեն ալ մօն կուկօն հազարան բըլբ-լունին: Բահա գու այլուկծինը նալ օր, ուրիմծ աշա:  
 Դըղին գուղա ալի մակտաբ. բաշ ըղածըն յետկն ալ դըրգա գու սօրվուշ հէկիմունին:  
 Մինասը հէկիմունին սօվ-րուշը բաշ ըղածըն յետը նահրա գու պօնուշ: Անու ալլայը հազ գը-նին. ուվէկու խատըն էլլիլ չէր, վէկ կուկար ուր մօղը, ալլայնուն լավօրընը գու: Շաղ չօնծած՝ անու օնունը կէլլա, ըմըն դեղ անու օնունը գուղօն: Անկան հի-վընդին կուկօն ուր մօղն օր, սը-րա չի կըղնուլ հօնկչուշի:  
 Վաշտունը սուկ ընէլօվ, վա-լըլէլօվ մեճի գու: Առտինն ալ թամպալին մեճն էր. նա պօնիր գու, նա յալ կուկեր պօնուշ յա սօրվուշ. անջա հօյն ու մօրը պօ-նածը գուղեր, մօն կուկար:  
 Վաշտունին մեռածըն յետը ըղածը գուղա բաշ գընա, շաղ ֆուխարընա գու: Աղ սըրին ալ հիշա գու ուր ախպօրը՝ Մինասին: Ի՞նճպէս անու թողալ խօ-րուն վըրըն ու ինճը յեղ էգալ. կիշէյն ալ լավ քուն ըղալ: Ինկ-նուրիմը գասա. «Անու ասլա կա-լէրը գերօն»:  
 Գօնծնի ալի էպեյնը սըրա, մե-մընալ՝ հիվընդնա գու: Ինճկան հէկիմ գար, կուկօն գաշին, ինճիգ հասկըննալ չին: Լըսին գու հը-նօր, ֆիլօն-ֆալօն դեղըն հէկիմ-մը գա, լավ բետկըծընա գու: Ժող-վըվին գու, կարար գընին դօնուշ աղ հէկիմին մօղը:  
 Յէպօր մըղնուն գու հէկիմին մօղը, Առտինը համանի ջօնճա գու ախպօրը, կըլնի օղվին, վայա գու: «Յէս,- գասա,- յեղ էգա, ամա քեզի չայծի կըղնուլ, մերա ինճի, ախպայս, ալ ուվէկ չունին. հայս մեռալ, մայս ալ լավ չի դէսնու: Յես ալ խսօյ հիվօնը իմ, նա գը-նիգ ունին, նա յալ դըղա»:  
 Դարի, խելածի Մինասը ախ-պօյն ու մօրը լավօրնա գու, գու-դա փարա. կընա, աբա, ինճպէս կուկա: Անա մարը Առտինին հեղ չի էշտալ:  
 Դարիմը չօնծած՝ Մինասին հօյնուն մեճի գու: Դըղըն մեճ թաղուն գընա, վըրըն ալ քար քաշա գու:  
 Մարը օրըն գասա.  
 - Դըղա, ուժ մեճըծած իս, արի գարկըվա, դուն-դեղ ըղի:  
 Գեշտուն ֆուխարա, չօնընվեր խելօլ ախճիգըն պերին գու, օնու-նը՝ Աստիսի: Յօտը օր, յօտը կիշ-եր հայսնիկ գընին: Ախճիգը խըն-դայ նա, էրեսնուն վառտ պուսներ գու, վայէ նա, մարկարիղ թապիր գու, քալէ նա, օտկին դագ ծա-ղիգ պուսներ գու. ասսօյ էր միր հայս Աստիսիգը:  
 Աս ախճիգը գօննա յօտը դը-դա, էրգու ախճիգ: Գաբին քե-լին նե:  
 Անիր հասօն ուրիմծ մուրա-զին, տունկ ալ հաս-նէկ ծիր մուրա-զին:  
 Հավածըն իրէկ խընծեր ընգալ: Մեզը՝ լըսօղին, մե-զը՝ բաղմօ-ղին, մեզն ալ՝ ալլայը դը-ղօծը:  
 Զանիկ-Օրդուի խոսվածքի յուրահատուկ ա ծայնավորը տպագրել ենք թավ ա տառով:



# ՄԻՆԱՍԸ

Ժամանակին լինում են մի մարդ ու կին. մարդու անունը Վաշտոն էր, կնոջ անունը՝ Լուսինա:

Այնքան էին իրար սիրում, որ միասին էին գնում աշխատելու, միասին էլ գալիս էին:

Այդպես բավական ժամանակ ապրելուց հետո՝ մի օր էլ մարդը կնոջն ասում է.

«Մյ կնիկ, մենք արդեն կամաց-կամաց ծերանում ենք, մեզ ուրախացնող, ծերության տարիներին մի թաս ջուր տվող չենք ունենա, մի բան մտածենք:

Մի օր կինը մարդուն ասում է.

«Արի գնանք եկեղեցի, աղոթենք Աստծուն, կարող է մեզ էլ մի երեխա տա:

Մարդը համաձայնում է կնոջ ասածին. երկուսով սկսում են եկեղեցի գնալ, աղոթել, խնդրել Աստծուն, որ մի երեխա նվիրի իրենց:

Որ անցնում է մի քանի ամիս, կինը երազում տեսնում է՝ ինչպես երկու հրեշտակներ գալիս նստում են մարդու և կնոջ ուսերին, լեզու են առնում, ասում.

«Գնացեք, երկու ոչխար մորթեցեք, մատաղ արեք, որ Աստված էլ ձեր ուզածն անի»:

Գիշերվա երազից կինը զարթոնում է, մարդուն բորբում է.

«Տո, զարթո՞ւր, լսիր, թե երազումս ինչ են տեսել:

«Ի՞նչ են տեսել, ա՞յ կնիկ, պատմիր: Կինը ամեն ինչ պատմում է մարդուն:

Մարդը վեր է թռչում, էլ կնոջը չի ասում, լույսը դեռ չբացված՝ գնում գտնում է չորանների, գնում է մի ոչխար՝

խոյ, գալիս տուն, ասում է.

«Կնիկ, վեր կաց, ոչխարը բերել են, տանենք եկեղեցի, մատաղ անենք:

Տանում են եկեղեցի, աղոթում են, մոմ են վառում, այդտեղ էլ մատաղը բաժանում են ու գալիս տուն:

Անցնում է երեք օր, կինը էլի տեսնում է նույն երազը. այս անգամ հրեշտակներն ասում են.

«Ինչու՞ մեկը մատաղ արեցիք, գնացեք մի հատ էլ արեք»:

Կինը մարդուն արթնացնում է.

«Տո, ասում է, իրեշտակները էլի եկան, ասացին. «Երկուսը մատաղ պիտի անեիք, ինչու՞ չարեցիք»:

Մարդը գնում, մի ոչխար էլ է գնում, տանում մատաղն անում են, բաժանում, հետ գալիս:

Բավական ժամանակ որ անցնում է, կինը տեսնում է, որ փորը ինչ-որ մեծանում է, ինքը գիրանում է, մի տեսակ է լինում. մարդուն ասում է.

«Տո, Վաշտոն, ոնց որ ես երեխա եմ ունենալու:

Մարդը վեր է թռչում թիկն տված տեղից, սկսում է պար գալ, մանի ասել, չի իմանում՝ ինչ անի, չի հավատում լսածին, բարձր ծայրով գոռում է.

«Մեռնեմ իմ Աստծու անունին:

Այդ օրվանից մարդը միշտ գնում է եկեղեցի, աղոթում է, մոմ է վառում, թեթևացած տուն է գալիս:

Մի գիշեր էլ կնոջ ցավերը բռնում են, մարդը գնում տատներ է կանչում, և մինչև լուսաբաց ծնվում են երկու տղաներ. մեկը՝ լավ, առողջ, մյուսը՝ նիհար, խեղճ, ծնկներից ներքև առանց ոտքերի: Առողջ երեխայի անունը դնում են Առտին, մյուսինը՝ Մինաս:

Վաշտոնն ու Լուսինատունը և ուրախ էին, և տխուր: Առտինը մեծանում էր օրեցօր, շուտ սկսեց խոսել, ման գալ, վազել, երեխաների հետ խաղալ, Մինասը՝ նիհար-նիհար, լավ չէր ուտում, ուշ սկսեց խոսել, քայլել չէր կարողանում: Վաշտոնն ու Լուսինատունը առավոտից իրիկուն սիրում էին Մինասին, գրկում ման էին տալիս: Մինասն էլ շատ խելացի էր, ինչ ասում էին, լսում էր, հիշում:

Առտինը տեսնում էր, որ եղբորը շատ են սիրում, բոլոր լավ բաները նրան են տալիս ուտելու, ման են տալիս, եկեղեցի են տանում, նախանձում է. իր վրա նայող

չկար: Ինքն էլ իրեն բարձր էր պահում. իբր թե՛ ինչքան էլ որ դրան խնամեք, չի կարող քայլել, խաղալ:

Առտինը մի օր հորն ու մորը ասում է.

«Ինչու՞ եք պահել Մինասին, ոչ քայլում է, ոչ խաղում, ոչ էլ կարող է աշխատել: Տարեք իշխանություններին տվեք, այնտեղ էլ թող մնա, թող խնամեն, ինչքան մենք խնամեցինք, հերիք է:

Որոշ ժամանակ է անցնում, էլի է ասում, բայց Վաշտոնն ու Լուսինատունը չէին ուզում լսել: Միշտ ասում էին.

«Մինասը մեր տան ուրախությունն է, մենք նրան շատ ենք սիրում, նա մեզ հետ պիտի ապրի, քանի մենք կանք:

Այդ օրվանից տանը սկսվում են խտասկությունները Առտինի և հոր ու մոր միջև:

Առտինը Մինասին միշտ խայթում է, թե քո պատճառով ինձ չեն սիրում: Մինասը խելացի էր, ոչինչ չէր ասում, ոչ մեկին ոչինչ չէր հայտնում: Ասում էր.

«Մայրս, հայրս քեզ էլ են շատ սիրում, բայց քանի որ ես քայլել չեմ կարող, ինձ խղճում են:

Վաշտոնն ու Լուսինատունը որոշում են գնալ եկեղեցի, բայց գնալ-գալը երկու օր էր տևում, շատ դժվար էր:

Գնալիս Առտինին զգուշացնում են, որ տնից դուրս չգա, եղբորը խնամի մինչև իրենց գալը:

Մայրն ու հայրը որ գնում են, Առտինը Մինասին ասում է.

«Արի քեզ էլի վրա նստեցնեն, մի քիչ ման տամ, երեկոյան կգանք:

Մինասը համաձայնում է: Առտինը Մինասին դնում է էլի վրա, տանում է ման տալու: Գնում են գնում շատ թե քիչ, Մինասը Առտինին ասում է.

«Տո՛ւր շատ հեռացանք, հետ գնանք: Նա էլ ասում է.

«Շատ ժամանակ չի անցնի, տանը կլինենք:

Մի քիչ էլ որ գնում են, տեսնում են՝ հասել են մի ջրաղացի մոտ: Մեկ էլ նրանց մոտենում է մի ծեր մարդ: Խնդրում է, որ էլը տան իրեն. մի պարկ պլյուրը տուն տանի, էլը հետ կբերի, փոխարենը այլուր կտա:

Առտինը Մինասին իջեցնում է էլի վրայից, նստեցնում է գետնին, էլը տալիս է այդ մարդուն:

Մարդը իր այլուրը բարձում է էլին, գնում իր տուն:

Առտինը Մինասին ասում է. «Տեսնեմ շուրջբոլորը ինչ կա-չկա»: Գնում է. այն գնալ էր, գնում ու չի գալիս:

Մինասը սպասում է, սպասում, Առտինը չի գալիս, էլը տանող մարդն էլ չի գալիս:

Սկսվում է անձրևը: Մինասը մի կերպ սողալով մտնում է թփի տակ, որ չթրջվի:

Երբ մթնում է, ջրաղացը փակվում է, էլ մարդ չի մնում, վախենում է. գայլերը կգան, իրեն կուտեն: Այդպես մտածելով՝ աչքերը փակվում են, քնում է:

Գիշերվա կեսին մեկ էլ լսում է երկու մարդու ձայն: Խոսելով գալիս են, նայում են՝ ջրաղացը փակվել է, վրան էլ կողպեք է դրված, կողպեքը ջարդում, մտնում են ներս: Զրուցելիս ընկերը ընկերոջը ասում է.

«Ո՞ւմ է պետք, որ ես ապրեմ, կինս երկու երեխաներով խեղճացած տանն է մնացել, ես էլ այսպես ման եմ գալիս անբանի նման:

Մյուս ընկերը ասում է.

«Դու մտածելու բան չունես: - Չէ, ասում է, ես կին, ընտանիք թողել եմ, որ աշխատեմ, փող վաստակեմ, բայց ձեռներս դատարկ տուն եմ գնում:

Ընկերն ասում է.

«Տո, դու մի մտածի, տունս որ վառվեց, իմ ունեցած հարստությունը տարել պահել եմ քարայրի մոտ՝ քարի տակ, ինձ էլ է հերիք, քեզ էլ:

Այսպես գրուցելով (շատ էին հոգնած)՝ աչքերը փակվում են, քնում են: Մեկ էլ աղ-



թատ ընկերը մտածում է, թե մի բան անի՝ անբողջ ունեցվածքը իրեն մնա: Վեր է կենում թե չէ, ընկերոջը գլորում է ձորը, բայց գլորելիս իր տակի տախտակն էլ է գլորվում ընկերոջ հետ, ինքն էլ հետևից է ընկնում. երկուսն էլ խեղդվում են:

Մինասը այս ամենը լսում է, վախից էլ քունը չի տանում:

Առավոտյան ջրաղացի տերը գալիս է, տեսնում՝ դուռը բաց է: Մտնում է ներս. տախտակներն էլ չկան: Քթի տակ հայտնում է, բայց էլ օգուտ չկա:

Մի քիչ հետո գալիս է էլը տանող մարդը էլի հետ, Մինասը դուրս է գալիս թփի տակից, մարդը հարցնում է.

«Որտե՞ղ է եղբայրդ: Ասում է.

«Չգիտեմ, ինձ թողեց այստեղ, գնաց, բայց ուր գնաց, չգիտեմ:

Բավական ժամանակ սպասում են, տեսնում են, որ ոչ մեկը չի գալիս, մարդը ասում է.

«Տո, տղա, արի գնանք իմ տուն. ոչ մեկը չկա, ես մենակ եմ. երևի օրերից մի օր կգան, քեզ կգտնեն:

Մարդը Մինասին դնում է էլի վրա, տանում տուն:

Վաշտոնն ու Լուսինատունը երբ գալիս են, տեսնում՝ Մինասը չկա, լաց են լինում, ողբում են: Այս ու այն կողմ են գնում, ընկնում են սար ու ձոր, փնտրում են. ում հարցնում են, ասում են՝ չգիտենք. չեն կարողանում գտնել, հետ են գալիս:

Այդ օրվանից մարդ ու կին չեն հանգստանում, բուն չեն ունենում. աչքերից թափվող արցունքներն էլ չեն կտրվում:

Մինասը մարդուն սկսում է սիրել. ասում է «հայրիկ»: Այդ մարդը շատ աշխատասեր էր. առավոտյան գնում էր արտ, երեկոյան գալիս: Մինասն էլ սողալով տունը մաքրում էր, կրակը վառում, հաց թխում: Մարդը, որ տուն էր գալիս, այդ ամենը տեսնում էր:

Մի օր էլ հայրը տախտակի տակ անիվ է դնում, որ Մինասի համար հեշտ լինի շարժվելը:

Մինասը երբ մի քիչ էլ է մեծանում, հայրը տեսնում է, որ շատ խելացի է, տանում է դպրոց: Տղան այնտեղ էլ շատ լավ է սովորում. մեկ տարում ավարտում է երկու դասարան: Հայրը տեսնում է տղայի շնորհքը, խելքը, մտածում է՝ ինչպես անի, որ տղան էլի սովորի, բայց փող չունի:

Երեկոյան հայրը ասում է.

«Տղաս, արի այս եգիպտացորենը վաճառենք, քեզ սովորելու տամ:

«Հայրիկ, ասում է Մինասը, ինձ կարո՞ղ ես տանել քարայրը:

«Ինչու՞, ասում է հայրը:

«Որ գնանք, գանք, եգիպտացորենը կվաճառենք:

«Իհարկե կտանեն, տղաս, ասում է հայրը, և հաջորդ օր գնում են:

Յոթ օր անց հասնում են քարայրը. հանգստանում են:

«Հայրիկ, գնա, երկու երկար փայտ գտիր, բեր այստեղ, ասում է տղան:

Հայրը բերում է: Սկսում են քարայրի կողքը դրված քարը շարժել:

Այնքան են շարժում ու շարժում, որ քարը մի քիչ կողքի է շարժվում: Տեսնում են՝ տակը թաղված է մի սնդուկ:

Բաց են անում, որ ինչ. լիքը ոսկի փող: Մինասն ասում է.

«Ինչքան որ կարող ես տանել, վերցրու, մնացածի վրա ծածկենք ու գնանք:

Մի քանի օր հետո հայրը տղային առնում գնում է, շատ քաղաքներ է ման գալիս, որ տղայի ոտքերը սարքեն: Փնտրել-փնտրելով գտնում է մի լավ բժիշկ, շատ մեծ գումար է տալիս, որ լավ սարքեն:

Մի ամիս չանցած՝ տղան կամաց-կամաց կաղալով ման է գալիս: Հայրը տղային առնում գալիս է մի մեծ քաղաք, առնում է մի տուն՝ բակով, այգով, կողքերը լրիվ վարդ ու ծաղիկ, այգու մեջ էլ ման են գալիս հազարան բլբուլները: Պահում է մի հատ էլ ծառա, որ իրենց խնամի:

Տղային էլի տալիս է դպրոց. ավարտելուց հետո էլ ուղարկում է՝ բժշկություն սովորելու:

Մինասը բժշկություն սովորելը ավարտելուց հետո սկսում է աշխատել: Նրան բոլորը սիրում են. ոչ ոքի խնդրանքը չէր մերժում, ով գալիս էր իր մոտ, բոլորին բուժում էր: Շատ չանցած՝ նա հայտնի է դառնում, ամեն տեղ նրա անունն են տալիս: Այնքան հիվանդներ են գալիս նրա մոտ, որ հանգստանալու ժամանակ չի գտնում:

Վաշտոնը սգալով, լացուկոծ անելով մեռնում է: Առտինն էլ ծույլի մեկն էր. ոչ աշխատում էր, ոչ էլ ուզում էր աշխատել կամ սովորել. միայն հոր ու մոր աշխատածն էր ուտում, ման գալիս:

Վաշտոնի մեռնելուց հետո եղածը ուտում վերջացնում է, շատ աղքատանում: Այդ ժամանակ էլ հիշում է իր եղբորը՝ Մինասին: Ինչպե՞ս նրան թողեց գետնի վրա, ու ինքը հետ եկավ. գիշերն էլ լավ քնեց: Ինքնիրեն ասում է. «Նրան հաստատ գայլերը կերան»:

Անցնում է էլի բավական ժամանակ, մեկ էլ հիվանդանում է: Ինչքան բժիշկ կար, գալիս նայում են, ոչինչ չեն հասկանում: Լսում են, որ այսինչ-այնինչ տեղը մի բժիշկ կա, լավ բուժում է: Հավաքվում են, որոշում են տանել այդ բժշկի մոտ:

Երբ որ մտնում են բժշկի մոտ, Առտինն անմիջապես ծանաչում է եղբորը, ընկնում է ոտքերը, լաց է լինում: «Ես, - ասում է, - հետ եկա, բայց քեզ չկարողացա գտնել, ներիր ինձ, եղբայրս, էլ ոչ մեկը չունեն. հայրս մահացավ, մայրս էլ լավ չի տեսնում: Ես էլ այսպես հիվանդ եմ, ոչ կին ունեմ, ոչ էլ երեխա»:

Բարի, խելացի Մինասը եղբորն ու մորը բուժում է, փող է տալիս. գնա, ապրիր, ինչպես ուզում ես: Բայց մայրը Առտինի հետ չի գնում:

Մի տարի չանցած՝ Մինասի խորթ հայրը մահանում է: Տղան մեծ թաղում է անում: Վրան էլ քար է քաշում:

Մայրը մի օր ասում է.

«Տղաս, արդեն մեծացել ես, արի ամուսնացիր, տուն-տեղ դիր:

Գնում են աղքատ, չունևոր, խելոք մի աղջիկ են բերում, անունը՝ Աստղիկ: Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում: Աղջիկը որ ծիծաղեր, երեսներին վարդ էր ծաղկում, որ լաց լիներ, մարգարիտ էր թափվում, որ քայլեր, ոտքերի տակ ծաղիկ էր ծլում. այսպիսին էր մեր հարս Աստղիկը:

Այս աղջիկը ունենում է յոթ տղա, երկու աղջիկ: Ապրում են բարօրության մեջ:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Երկնքից երեք խնձոր ընկավ: Մեկը՝ լողին, մեկը՝ պատմողին, մեկն էլ՝ բոլոր երեխաներին:



Սկզբը՝ 3-րդ էջում:

N12

ՏՐԱՊԵԶՈՆԻ ԱՄՐԱՅՎԱԾ ՇՐՋԱՆԻ ՊԵՏԻ ԳՐԱՍԱՆԸ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ ԳՅՈՒՍՏԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՂ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԳՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՂ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 563

Копия

2 августа 1916 г. г. Траpezунд

Полицмейстеру города Траpezунд

По приказанию начальника Траpezундского укрепленного района, предписываю Вам печатать, принять под охрану полиции и составить опись имущества и товаров, находящихся в армянских магазинах, бывших под ведением комитета, организованного генералом Ляховым.

О перевозке названных товаров и об отводе помещений для охраны товаров под склады сделано одновременно с сим распоряжение подпоручику Минцлову и коменданту города.

По исполнении сего предписываю донести.

Подлинное подписал вр. и. д. начальника штаба, военный инженер, подполковник Беляев [подпись] Прапорщик [подпись не разборчива]

С подлинным верно: и. об. полицмейстера г. Траpezунда [подпись не разборчива]

ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, ք. 23 և շրջ.: Պատճեն: Չեռազիր:

N13

ՏՐԱՊԵԶՈՆԻ ԳՅՈՒՍՏԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՇԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԸ ՏՐԱՊԵԶՈՆԻ ԱՄՐԱՅՎԱԾ ՇՐՋԱՆԻ ՊԵՏԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍՎԱԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

16 октября 1916 г. Траpezунд

Его Превосходительству господину начальнику Траpezундского укрепленного района

Уполномоченного Кавказского Армянского Благотворительного Общества и Армянского Центрального Комитета - присяжного поверенного Аршака Богдановича Аракелова, проживающего в Траpezунде в доме Армянской Церкви

Прошение

Потрясающие, неслыханные в истории человечества кровавые события, разразившиеся в пределах Турции над христианскими, преимущественно армянами, вызвали глубокую скорбь в сердцах русских армян, единоверцах и зарубежных собратьях их.

Дети, лишенные родителей, женщины, потерявшие мужей, братьев, отцов, вырезанных на их глазах фанатичными турецкими мусульманами, сотни тысяч армян, потерявших свои семьи, свой кров, разоренные до последней нитки и пустившиеся в бегство в пределы Великой человеколюбивой и христианской России, естественно вызывали во всех теплое участливое отношение к трагической судьбе живших в Турции армян. И правительство наше и общественные армянские организации горячо пользовались [помогали] на горе турецких армян и организовали широкую помощь пострадавшим. В числе этих организаций работают не щадя ни сил, ни времени, Кавказское Армянское Благотворительное Общество и состоящий при нем Армянский Центральный Комитет, кои повсюду открывают местные комитеты с стоящими во главе их в звании председателя уполномоченными.

С разрешения бывшего Вашего предместника генерал-майора Ляхова, Кавказским Армянским Благотворительным Обществом был открыт Армянский комитет в Траpezунде для охраны и управления покиннутыми имуществом армян, оказания помощи пострадавшим и собирания сирот. Комитет этот работал под наблюдением и при непосредственном участии уполномоченного Армянского Благотворительного Общества протоирея Тер Месропа Меляна. В начале августа месяца отец Мелян заболел и вынужден был выехать в Тифлис на лечение. После его отъезда приехал в Траpezунд частный поверенный (из писцов) некий Каламкарян, по жалобе которого Комитет был закрыт по распоряжению Вашего Превосходительства.

Насколько жалоба эта была основательной, какие преступления инкриминировались членам Комитета и было ли подробное расследование — до сего времени Армянское Благотворительное Общество на авказе и Центральный Комитет не имеют никаких сведений, но по единодушному показанию бывших членов бывшего Траpezундского Армянского Комитета и председателя отца Меляна, жалобщик Каламкарян ввел местные власти просто в заблуждение, последствием чего явилось закрытие и опечатание дел Комитета.

Смею заверить Ваше Превосходительство, что из личных моих распросов как членов бывшего Комитета, так и председателя отца Меляна по предмету жалобы Каламкаряна ничего противозаконно и несправильного в действиях упраздненного Комитета нельзя было усмотреть.

Ныне Армянское Благотворительное Общество и Центральный Армянский Комитет помощи лицам, пострадавшим от войны, уполномочил меня приехать в Траpezунд, поручено мне образовать новый комитет согласно особой инструкции, при сем прилагаемой, по каковой инструкции действует и само Общество на Кавказе.

А посему я честь имею просить Ваше Превосходительство:

1. Разрешить открыть "Траpezундский Армянский Комитет", состоящий из пяти членов и четырех кандидатов к ним под моим председательством (список членов и кандидатов представляю ниже).

2. Упразднить действующую ныне комиссию под председательством г. Чижевского и

3. Предписать передать все дела, переписку и имущества новому комитету, а также снять все печати, которые были положены на дверях, зданиях и на кассу в момент закрытия прежнего Комитета.

Список членов Комитета: Председатель, присяжный поверенный Аршак Богданович Аракелов, вице-председатель Михрат Эмирян, члены: Аршак Синанян, г-жа Беатриса Днигилян и Гарник Николаян, кандидаты к ним: Манат Чермакян, Ваган Баларян, Нерсес Фундугян и г-жа Араксия Пачаджян.

ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 21, ք. 2-3: Պատճեն: Չեռազիր:

[А. Аракелов]

(Շարունակելի)

ԱՐԽԱԶԻԱՅԻ ԳԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ԳՈՎՅԱՆՆԵՍ ԳՈՎԱԿ

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՐԵՑՅԱՆ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐՈՎ

Հայաստանի անկախությանը

ԳՆԶՈՒՅԻՆ ՍՈՒՒՆՈՒՄԻ

ՇՈՒԿԱՅՈՒՄ

Ողջուն ձեզ, իմ բախտակիցներ, Տերն ենք ազատ մեր արտ ու տան: Գնանք հեղինք սուրբ հողը մեր Արցունքներով երջանկության:

Նա իր աշխատանքում այնքան էր արհեստավարժ, որ, անկասկած, հաստատ կարող էր ճշգրտորեն գուշակել իմ ապագան...

Մեր երազանքն առավ մարմին՝ Բռնենք ճանփան մեզ տուն բերող: Թող մեր աչքերն այրվեն առմիշտ Միայն խինդի արցունքներով:

Բայց այնքան չնչի՛ն էր նրա՝ իմ ապագան ճշգրտորեն գուշակելու համար պահանջած վարձը, որ ես դառնացած ու հիասթափված հեռացա:

Եւ օրհնություն ամենեցուն, Լինեք բարի, վեհ ու ներող: Նայենք իրար աչքով լեցուն՝ երջանկության արցունքներով:

Դառնացած ու հիասթափված իմ ապագայից, քանզի գնչուհին - ես համոզված եմ ցայսօր-հաստատ գիտեր այն ու արժե՛քը նրա:

Բաժակները լցնենք, խմենք Կենացն օրվա մեզ խինդ բերող, Ու ողողենք վշտերը մեր երջանկության արցունքներով:

«Ձայն համշենականում» քանիցս անդրադարձել ենք կրոնափոխ համշենահայերի պատմությանն ու խոսվածքին: Այս անգամ տպագրելով Հովի. Թունանյանի հանրահայտ «Սուտասանը» հեքիաթը, զուգահեռաբար ներկայացնում ենք նաեւ այդ հեքիաթի Համշենի բարբառի խոփայի խոսվածքով մեր բարգձանությունը:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐՂԱՆՅԱՆ

ԳՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում է, չի լինում մի թագավոր: Ես թագավորը իր երկրումը հայտնում է. «Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կետը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

- Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

- Կպատահի,- պատասխանում է թագավորը:- Իմ պապն էլ մի չիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

Գալիս է մի դերձակ: Ասում է.

- Ներողություն, թագավոր, ես վաղ պիտի գայի, ուշացա: Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու:

- Հա՛, լավ ես արել,- ասում է թագավորը,- բայց լավ չէիր կարկատել, ես առավոտ մի քիչ անձրև թափվեց: Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կտոր կոճառակին:

- Դու՞ ինչ ես ուզում, այ մարդ,- հարցնում է թագավորը:

- Ինձ մի կոտ ոսկի ես պարտք եկել եմ տանեմ:

- Մի կոտ ոսկի՞,- գարմանում է թագավորը:- Սու՛տ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտք:

- Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կետը տուր:

- Հէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում,- խոսքը փոխում է թագավորը:

- Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

.....

ԽԱՓԵԼՈՒՋԻՆ

Գելլա, էլլի չի մեզ փաղիշահ: Աս փաղիշահն ույնէ աշխարհն գասա. «Վօլ ամօն խափէլուքնն գասա քի, յես աստի քա՛՝ իսա շիդագ չա, անու իմ աշխարիս գէսը դէլօղ ուն»:

Քուկա մեզ հոյիվ մէ: Գասա.

- Փաղիշահն արբի թող, իմ դաղէ մեզ փիր՝ մէ ուներ, գօնգած (գունգած) դաղէ փիօլէ հավային (երզն-քին) աստաղնիյէ խառնի գուր:

- Ամօն ալ գէլլի,- գասա՞՞ փաղիշահ,- իմ բարն ալ մեզ չիբուխ մէ ուներ, մեզ ջօթ պիօնէ (պիանէ) քէնէ գուր, մէգալ ջօթէ աաքազան քօլէ գուր:

Խափէլուքնն քէլօխէ քիլէլօլ թուս քէնա գու (գէլլա):

Մեզ թերզի մէ քուկա: Գասա.

- Փաղիշահ՞, յես առաջ (թեզ) էգօղ է, ուշացա: Էյեզ շաղ չախ էյել, գածգօննիյէ գածգէցին, հավան (երզն-քէ) պարէնէցավ, քէնացի գարզըրուշ:

- Հա՛, սոյ այեր,- գասա փաղիշահ,- համա սոյ գարզըրէցեր օջ, աս աքվան քիչ մէ չախ էյել:

Ան ալ քէնաց:

Մեզ ֆուքարա (ֆուքաա) կյաղացի մէ գօթ օնթինէ դագէ մըրնու գու:

- Թո՛ւն ինչ քուզէս, դա՛ մարթ,- հարցնա գու փաղիշահ:

- Թուն ինձի մեզ գօթ մէ ալթուն դալիք ես, էզի ան դօնուշ:

- Մեզ գօթ մէ ալթուն,- շաշըննա գու փաղիշահ,- շիդագ աստ չէս, յես քեզի ալթուն դալիք չին:

- Շիդագ թա աստ չին, աշխարհիդ գէսը դու:

- Չա՛, չա՛, շիդագ գասս,- ույնէ ասաց խաբարը՞ թարցէնա գու փաղիշահ:

- Շիդագ թա գասին, գօթ մէ ալթունէ դու:

1 Դագանակ՝ բառը դեղնեկ ձևով ունեն, բայց նախընտրում են ասել փիր, այսինքն՝ փիր:

2 Պատասխանել բառը չունեն, ԽՍՀՄ-ում բնակվող կրոնափոխ համշենահայերն օգտագործում էին ռուսերենից փոխառյալ օղվի բառը, իսկ խոփայի գավառի համշենցիներն ասում են քուկա:

3 Ներողություն բառը կամ հոմանիշը չունեն:

4 Թունանյանի բնագրում խոսք բառն է, բայց նրանք խոսք բառը չունեն, ասում են խաբար:



Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐՂԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЫАН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org